I. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Ագրարային ոլորտն առանցքային դերակատարություն ունի Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Սակայն ագրոպարենային համակարգում կուտակվել են բազմաթիվ խնդիրներ, որոնք ժամանակի ընթացքում լուծումներ չստանալով վեր են ածվել զարգացումը խոչընդոտող հանգամանքի: Ասվածն ամբողջապես վերաբերում է նաև գյուղատնտեսությունում տնտեսավարող հիմնական սուբյեկտ՝ առաջնային արտադրական միավորներ հանդիսացող գյուղացիական տնտեսություններին, դրանց գործունեությանը, որոնք ունեն փոքր և մասնատված հողակտորներ, սոցիալական, արտադրական և ֆինանսական ենթակառուցվածքներից օգտվելու դժվարություններ, տեղեկատվության, խորհրդատվության, գիտելիքի, ռեսուրսների և ժամանակակից ինովացիոն տեխնոլոգիաների, տեխնիկայի ձեռքբերմամբ պայմանավորված ու արտադրված արտադրանքի իրացման քրոնիկ դարձած բարդույթներ:

Բնականաբար գյուղացիական (ֆերմերային) տնտեսությունների կայացման գործընթացի դանդաղացումը, զարգացման տնտեսական ու իրավաօրենսդրական կանոնակարգումների արդյունավետության ցածր մակարդակը ունեցել են, ունեն և առաջիկայում էլ կունենան որոշիչ ազդեցություն ՀՀ պարենային անվտանգության համակարգի ձևավորման, ապահովվածության վիճակի բարելավման վրա:

«ՀՀ-ում գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների հիմնախնդիրները և լուծման ուղիների առաջադրումը» ծրագիրն իրականացվել է հաստատված առաջադրանքին և օրացուցային պլանին համապատասխան[1]:

1. **Տարածաշրջանային ագրարային քաղաքականության մշակում, ոլորտի կառավարման շուրջ պարտականությունների բաշխում**- ՀՀ-ում մինչ 2019թ. ագրարային օրենդրական, իրավական ակտերի և ընդհանրապես ագրարային քաղաքականության մշակման ու կյանքի կոչման գործառույթներ էր իրականացնում գլխավորապես ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը: Նախարարության լուծարումից հետո նշված գործառույթները փոխանցվեցին ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը, որը հանդիսանալով պետական կառավարման առավելապես ֆունկցիոնալ մարմին, չի կարող կրել լիարժեք պատասխանատվություն, բազմակողմանիորեն և լայն թափով զբաղվել ագրարային ներուժի՝ հողի, ջրի արդյունավետ օգտագործման հարցերով, առավել ևս ստանձնել գյուղացիական տնտեսությունների գործունեության բազմազանեցման, համատեղ աշխատելու ձևերի ներդրման, կոոպերացիաների ձևավորման, մոնիթորինգի անցկացման, ռեեստրի վարման և այլ հարցերով: Իրավիճակը թելադրում է ագրոպարենային համակարգի պետական կառավարման կենտրոնական, տարածքային և տեղական մարմինների միջև որոշակի գործառույթային բաշխվածության տեղաշարժեր իրականացնել, առավել հզորացնելով վերջիններիս ագրարային քաղաքականության թե մշակման թե իրականացման կարողությունները: Փաստացի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությունը գյուղատնտեսության զարգացման ծրագրերի իրականացմանը բավականին անորոշ ու թերի է: Գյուղատնտեսական արտադրությունը համայնքներում կառավարելի դարձնելու, այդ ոլորտում համայնքային քաղաքականություն մշակելու և իրականացնելու նպատակով առաջարկվում է որոշակի կառուցվածքային ու գործառույթային փոփոխություններ կատարել արդեն խոշորացված համայքներում: Մասնավորապես համայնքապետարանի կառուցվածքում նպատակահարմար է ավելացնել համայնքի ղեկավարի՝ գյուղատնտեսության զարգացման գծով տեղակալի (այսուհետև տեղակալ) ինստիտուտը: Այս դեպքում համայնքի ղեկավարի

[1] Հետազոտական կենտրոնում առկա է նաև հաշվետվության ընդարձակ տարբերակը, որտեղ մանրամասն ադրադարձ է կատարված ներկայացվող հարցերին:

պարտականություններում կընդգրկվի համայնքի կտրվածքով գյուղատնտեսության զարգացման քաղաքականության միջնորդավորված իրականացում:

Գտնում ենք, որ տեղակալը պետության կողմից պատվիրակված լիազորություններից բացի պետք է իրականացնի մի շարք պարտադիր լիազորություններ.

1. համայնքային սեփականություն համարվող ոռոգման ցանցերի շահագործումը, դրանց շինարարությունը և վերանորոգումը.
2. նախաձեռնում և գյուղատնտեսության զարգացման համայնքային խորհրդի, համայնքապետարանի աշխատակազմի միջոցով մշակում ու ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի գյուղատնտեսական գործունեության զարգացման հնգամյա ծրագիրը,
3. մշակում է և վերադաս մարմիններին է ներկայացնում գյուղատնտեսության բնագավառին առնչվող սուբվենցիոն և սուբսիդավորման ծրագրերի իրականացման նախագծեր,
4. մասնակցում է համայնքի բյուջեի մշակման աշխատանքներին և առաջարկություններով է հանդես գալիս գյուղատնտեսության բնագավառին հատկացվելիք ֆինանսական ռեսուրսների վերաբերյալ՝ հիմք ընդունելով գյուղատնտեսության զարգացման հնգամյա ծրագիրը,
5. աջակցում է գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը,
6. աջակցում է ագրոբիզնեսի զարգացմանը, այդ թվում տնտեսավարման նոր ձևերի ներդրմանը,
7. աջակցում է տոհմային և սերմնաբուծական աշխատանքներին,
8. ձևավորում է տնտեսական զարգացման հիմնադրամներ,
9. աջակցում է ագրարային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը:

Մյուս կարևոր օղակը համայնքային մակարդակում գյուղատնտեսական արտադրության քաղաքականության մշակման և իրականացման գործում դիտարկում ենք **գյուղատնտեսության զարգացման խորհուրդի ձևավորումը՝** հնգամյա ծրագրի մշակման աշխատանքներ և այլն: Խորհուրդը իր կազմում պետք է ընդգրկի համայնքի ղեկավարին, տեղակալներին, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարներին և առաջավոր ֆերմերների: Խորհրդի կազմավորման և գործունեության կարգը կսահմանի համայնքի ղեկավարը և կհաստատի համայնքի ավագանին:

Համայնքի գյուղատնտեսության զարգացման հնգամյա ծրագիրը, իր մեջ կներառի հետևյալ ուղղությունները.

- Գյուղի, գյուղատնտեսության և ագրոբիզնեսի զարգացում,
- Օրգանական գյուղատնտեսության զարգացում՝ ստուգում, մոնիտորինգ, որակի վերահսկողություն և տեխնիկական աջակցություն,
- Բարձրարժեք մշակաբույսերի մշակության զարգացում,
- Գյուղատնտեսական կրթության զարգացում, մասնագիտական կադրերով ապահովվածություն,
- Գիտության նվաճումների, նոր տեխնոլոգիաների և համաշխարհային փորձի ներդրում և տեղայնացում,
- Գյուղատնտեսական մթերքների իրացման շուկաների հետազոտում և մարքեթինգային տեղեկատվության ապահովում:

Համայնքի գյուղատնտեսության զարգացման հնգամյա ծրագիրը համայնքի ղեկավարը ներկայացնում է ավագանու հաստատմանը: Եթե համայնքի նորընտիր ղեկավարի լիազորություններ ստանձնելու ժամկետը համընկնում է նորընտիր ավագանու լիազորություններն ստանձնելու օրվանից եռամսյա ժամկետին, ապա համայնքի նորընտիր ղեկավարը գյուղատնտեսության զարգացման հնգամյա ծրագիրը համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում կամ ավագանու լիազորություններն ստանձնելու օրվանից եռամսյա ժամկետում կամ իր լիազորություններն ստանձնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում:

Համայնքի ավագանին քննարկում է ներկայացված ծրագիրը, կատարում է փոփոխություններ և իր որոշմամբ ընդունելուց հետո ներկայացնում է մարզպետարան: Հնգամյա զարգացման ծրագրի և դրա հաշվետվության ձևաչափը սահմանում է կենրոնական կառավարման լիազոր մարմինը: Համայնքի ղեկավարը տարեկան բյուջեների նախագծերը մշակելիս հաշվի է առնում համայնքի բնակչության կենսական շահերը գյուղատնտեսության բնագավառում, համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, ինչպես նաև առկա ռեսուրսները:

2. Առաջնային արտադրական միավորների գործունեությունը կանոնակարգող օրենքների նախագծերի հիմնական դրույթների մշակում - ՀՀ-ում ընդունվել են ագրարային ոլորտի կարգավորմանը և զարգացմանը ուղղված ավելի քան 55 օրենքներ, սակայն գյուղացիական տնտեսությունների գործունեությունը կարգավորող իրավական փաստաթղթեր դեռևս բացակայում են: Ինչպես նաև օրենսդրորեն հստակեցված և սահմանված չեն մի շարք հասկացություններ՝ գյուղատնտեսական առաջնային արտադրություն, գյուղատնտեսական առաջնային արտադրական միավոր, գյուղացիական և ֆերմերային տնտեսություն, ֆերմեր կամ գյուղատնտես, վարելահողերի նպատակային օգտագործում և այլն:

«Գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների մասին» և *«Գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային օգտագործման մասին»* ՀՀ օրենքների ընդունումը օբյեկտի-վորեն անհրաժեշտություն է և պայմանավորված է գյուղատնտեսությունը որպես ռազմավարական ճյուղ հանդիսանալու և պարենային անվտանգության ապահովման հանգամանքներով: Գյուղա-ցիական տնտեսությունների և ոլորտում ներգրավված մյուս տնտեսավարող սուբյեկտների արդյունավետ գործունեության ծավալման հնարավորությունները եղել և մնում են սահմանափակ: ՀՀ-ում գյուղացիական տնտեսությունների՝ առաջնային արտադրական միավորների, կայացմանը կնպաստի գործուն ագրարային քաղաքականության իրականացումը և իրավաօրենսդրության ամբողջականացումը: Ուստի ՀՀ-ում ագրարային քաղաքականության իրականացման փոփոխու-թյունը և գյուղացիական տնտեսությունների գործունեության կարգավորմանը միտված օրենքների մշակումը և ընդունումը կնպաստի մասնավոր հատված – պետական կառավարման օղակների արդյունավետ փոխգործակցությանը: Միևնույն ժամանակ ելնելով տարածաշրջանային ու ճյուղային առանձնահատկություններից, տնտեսությունների բնատնտեսական դիրքից և կարիքներից առաջ է գալիս պետական բազմակողմանի, նպատակային, հասցեական ու տարբերակված աջակցության իրականացումը, որին կօժանդակի տնտեսությունների որոշակի դասակարգվածությունը, ինչը կծառայի կուտակված խնդիրների վերհանմանը և սուբսիդավորման ծրագրերի արդյունավետության բարձրացմանը:

ՀՀ «Գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների մասին» օրենքը կարող է պարունակել հետևյալ դրույթները.

- Ընդհանուր հասկացություններ (գյուղատնտեսությունը գերակա ոլորտ, վարելահողերի նպա-տակային օգտագործում, գյուղատնտեսական առաջնային արտադրանք, գյուղատնտեսական առաջնային արտադրական միավոր, գյուղացիական և ֆերմերային տնտեսություն, ֆերմեր կամ գյուղատնտես, գյուղացիական և ֆերմերային տնտեսության անդամ),
- Գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների ստեղծում,
- Գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների գործունեությունը,
- Գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների գործունեության սկզբունքներ,
- Գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների իրավունքներն ու պարտականություններ,
- Գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների դասակարգում,
- Գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների ռեեստր,
- Գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների միավորում
- Գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների գործունեության դադարեցում

- Գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների լուծարում
- Գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների պետական աջակցություն

Գյուղատնտեսությունն արտադրական ներուժի օգտագործման և հողօգտագործման տեսանկյունից դեռևս ցածր մակարդակ ունի: Այսպես. 2022թ. ՀՀ-ում վարելահողերի նպատակային օգտագործումը եղել է 47.97%, որը 2018թ. համեմատ կրճատվել է 6.42 տոկոսային կետով: Ուստի նպատակային օգտագործման մակարդակի բարձացման համար կարևորում ենք չօգտագործման պատճառների վերհանումը և դասակարգումը՝ օբյեկտիվի ու սուբյեկտիվի:

ՀՀ-ում գյուղատնտեսական հողատեսքերի օգտագործման վիճակի, գյուղացիական տնտեսություններում չմշակման կամ ոչ նպատակային օգտագործման օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների ուսումնասիրությունից ելնելով առաջարկվում է «Գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային օգտագործման մասին» օրենքի մշակումը և ընդունումը, որը կարող է պարունակել հետևյալ դրույթները.

- Ընդհանուր հասկացություններ (գյուղատնտեսություն, գյուղատնտեսական նշանակության հողեր, հողերի նպատակային օգտագործում, հողերի միավորում կամ կոնսոլիդացիա, հողի շուկա, հողերի առքուվաճառք, հողերի վարձակալություն, հողասեփականատեր, հողօգտագործող, հողերի ռեկվիզիցիա)
- Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման նպատակներն ու խնդիրները
- Գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային օգտագործման սկզբունքները,
- Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործողի իրավունքներն ու պարտականությունները,
- Գյուղատնտեսական նշանակության հողերի ռեեստր,
- Գյուղատնտեսական նշանակության հողերի միավորում, մասնավորապես «Գյուղատնտեսական նշանակության հողերի կոնսոլիդացիայի» գործակալության ստեղծում, գործառույթների սահմանում,
- Գյուղատնտեսական նշանակության հողերի տիրապետման և օգտագործման իրավունքի դադարեցում,
- Գյուղատնտեսական նշանակության հողերի շուկայի զարգացման նպատակով հարթակի ձևավորում:

3. **Գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների դասակարգվածության մեթոդական մոտեցումներ**- Հայաստանում պարենային ապահովման խնդիրների լուծման հրամայականը պահանջում է ագրարային քաղաքականությունն ուղղել գյուղացիական տնտեսությունների կայացմանն ու զարգացմանը: Վարվող ագրարային քաղաքականությունը, պետական աջակցության ծրագրերի արդյունքները գոհացնող չեն ինչպես ագրոպարենային համակարգի ոլորտների զարգացման տեմպերի այնպես էլ պարենային անվտանգության ապահովման տեսանկյունից, որի արդյունքում պարբերաբար փոփոխման են ենթարկվում իրականացվող միջոցառումները: Վերլուծությունները վկայում են, որ այս ամենը հետևանք է աջակցության ծրագրերի, վարկային ռեսուրսների տրամադրման միջոցառումների հետազդեցությունը չգնահատելու և ոչ հիմնավոր ու գիտական մոտեցումների: Առաջավոր փորձը ևս վկայում է, որ անհրաժեշտություն է առաջացել վարվող պարզ ու ընդհանրական քաղաքականությունից անցում կատարելու բազմաքայլի և հասցեականի, ինչին էապես կնպաստի հետազոտության շրջանակներում մշակված «Գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների դասակարգման» մեթոդական ցուցումները, որտեղ օգտագործվում են գյուղացիական տնտեսությունների բնութագրող հետևյալ ցուցանիշները.

- Գյուղատնտեսական նշանակության հողերի չափն ըստ հողատեսքերի,
- Անասնագլխաքանակն ըստ գյուղատնտեսական կենդանիների տեսակների,

- Արտադրված արտադրանքի իրացումից հասույթ,
- Ապրանքայնության մակարդակ,
- Հիմնական միջոցների առկայություն,
- Տնտեսության վարման ձև (էքստենսիվ և ինտենսիվ),
- Փոխգործակցելու տեսակներ:

Գյուղացիական տնտեսությունները բնութագրող յուրաքանչյուր ցուցանիշի համար հաշվարկվել է գնահատման արդյունքային ցուցիչ (KPI), որոնց հանրագումարով որոշվում է դիտարկվող գյուղացիական տնտեսության դասակարգվածությունը C, C+, B, A, A+ խմբերից մեկում:

Մշակված մեթոդական ցուցումները նախատեսված են ինչպես կրթական ոլորտում ուսումնական գործընթացի, գործնական պարապմունքների արդյունավետ կազմակերպման ու անցկացման, այնպես էլ ագրոգիտական վերլուծական աշխատանքների իրականացման և առաջարկությունների հասցեականության ապահովման համար: Գյուղացիական տնտեսությունների դասակարգման մեթոդը կարող է լայնորեն կիրառելի լինել ՀՀ ագրարային օրենսդրության տարբերակման, ոլորտի կառավարման բոլոր մակարդակներում քաղաքականության մշակման, կատարելագործման, աջակցության և սուբսիդավորման ծրագրերն առավել թիրախային, նպատակային և արդյունավետ իրականացնելու առումով: Այն կարող է օգտագործվել հատկապես հանրապետության ֆինանսաբանկային համակարգի և փոխատվություն տրամադրող կառույցների համար՝ գյուղատնտեսական վարկեր և փոխատվություն տրամադրելու, ագրոբիզնեսում լիզինգային պայմանների հստակեցելու, գյուղացիական տնտեսությունների արտադրական կառուցվածքի և համալիր բնույթի իրատեսական ու կողմնորոշիչ պատկերացում կազմելու տեսանկյունից:

4. **ՀՀ պարենային արժեշղթաների մշակում, գյուղացիական տնտեսությունների տեղի և դերի վերարժևորում** – ՀՀ գյուղատնտեսության կայունությունը բնութագրող ցուցանիշները պայմանավորված են առաջնային արտադրական միավորների մրցունակությունից, գործընթացների կառավարման արդյունավետությունից: Միաժամանակ օբյեկտիվորեն գյուղատնտեսության առանձնահատկությունները սահմանափակում են իր իսկ մրցունակության հնարավորություններն այլ ճյուղերի համեմատությամբ: Կարող ենք եզրակացնել, որ Հայաստանում պարենային անվտանգության ապահովման ներկայիս համակարգը գործում է ոչ արդյունավետ՝ ելնելով կազմակերպական, կառավարման, տնտեսական, ֆինանսական և այլ գործոններից: Ըստ էության համակարգված չեն գործում գյուղատնտեսական արտադրանքի գնման, վերամշակման և ընդհանրապես արժեշղթաներում ներառված ենթակառուցվածքներն ու օղակները: Համեմատական կարգով կազմակերպվածություն է նկատվում արժեշղթաների արտահանման օղակներում: Գյուղացիական տնտեսությունների հիմնախնդիրները վերհանելու, տարբերակելու և լուծման ուղիների առաջադրումը ուղղորդում է ուսումնասիրել գյուղատնտեսական հիմնական արտադրանքների արժեշղթաները: Ընդ որում արժեշղթայում գյուղացիական տնտեսությունների դերի արժևորումը և սպասվելիք եկամուտների մակարդակի համապատասխանեցումն ու կայունացումը իրավմամբ մնում է օրակարգային:

Պարենային **ցորենի** արտադրությունը ՀՀ-ում ունի ռազմավարական նշանակություն: Ցորենի ինքնաբավության մակարդակը 2016թ. (53,2%) ի վեր ունի նվազման միտում: Այն 2022թ. 2018թ. նկատմամբ նվազել է 7,1 տոկոսային կետով՝ կազմելով 24,4 %, ինչը պայմանավորված է եղել հիմնականում գյուղացիական տնտեսությունների արտադրված հացահատիկի և հատիկաընդեղենի ապրանքայնության մակարդակով, որը կազմել է 23-30 տոկոս:[2] Նույն ժամանակահատվածում տարեկան ներմուծվել է շուրջ 390 հազ. տոննա ցորեն:

[2] ՀՀ ՎԿ, Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2021թ., 2022թ., https://armstat.am/file/article/iracum__2021.pdf , https://armstat.am/file/article/iracum_2022.pdf

ՀՀ-ում ցորենի շղթայի հիմնական դերակատարներն են՝ արտադրության միջոցների մատակարարները, ցորենի մշակությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունները (C, C+, B, A, A+ խմբերում գործունեություն ծավալող[3]), վերամշակող ընկերությունները (ալրաղացներ, հացաթխման արտադրամասեր, հրուշակեղենի, մակարոնեղենի արտադրությամբ զբաղվող ընկերություններ և այլ), վաճառողներն ու սպառողները: Վերջին տարիներին ի հայտ են եկել նոր դերակատարներ, որոնք արտահանում են փոքր քանակությամբ այլուր, հաց և հացամթերք:

Ցորենի արժեշղթայի առաջին օղակի հիմնական սուբյեկտներ հանդիսանում են գյուղացիական տնտեսությունները: Ըստ մշակված մեթոդի գյուղացիական տնտեսությունները պայմանականորեն դասակարգվել են 5 խմբի (C (գերփոքր), C+(փոքր), B(միջին), A(համեմատական խոշոր), A+(համեմատական առավել խոշոր)), որը հնարավորություն է տվել տարբերակված ձևով հաշվարկել միավոր տարածության հաշվով արտադրանքի ինքնարժեքը, շահույթը և շահութաբերության մակարդակը, ինչպես սուբսիդիա ստացած գյուղացիական տնտեսություններում, այնպես էլ չստացած (աղյուսակ 1):

C և C+ խմբերում գտնվող գյուղացիական տնտեսություններում 2022թ. 2020թ. համեմատ աշնանացան ցորենի 1 հա-ի հաշվով զուտ եկամուտը ավելացել է 206,4%-ով, իսկ պետական աջակցություն ստացած գյուղացիական տնտեսություններում՝ 236,3%-ով: Նույն ժամանակահատվածում B խմբում գտնվող գյուղացիական տնտեսություններում 1 հա հաշվով զուտ եկամուտը ավելացել է 143,7%-ով, իսկ պետական աջակցություն ստացած գյուղացիական տնտեսություններում 184,2%-ով: A և A+ խմբերում գտնվող գյուղացիական տնտեսություններում 1 հա-ի հաշվով զուտ եկամուտը կրճատվել է համապատասխանաբար՝ 1,1 և 68,8%-ով, իսկ պետական աջակցություն ստացած գյուղացիական տնտեսություններում՝ համապատասխանաբար 1,1 և 32,8 տոկոսներով: A և A+ խմբերում գտնվող գյուղացիական տնտեսություններում 2022թ· տնտեսական ցուցանիշների մակարդակի իջեցում է նկատվում հիմնականում պարարտանյութերի, դիզելային վառելիքի, թունաքիմիկատների բարձր գներով պայմանավորված:

ՀՀ-ում 2021թ. ցորենի միջին բերքատվությունը կազմել է 14,9 ցենտներ՝ հիմնականում կապված կարկուտի և երաշտի երևույթների հետ: Նշված միջին բերքատվության և իրացման ցածր գնի պայմաններում գյուղացիական տնտեսությունները դժվարություններ են ունեցել ծախսածածկման գործընթացում: Արդյունքում C, C+ և B խմբերում գտնվող գյուղացիական տնտեսություններում 2021թ. զուտ եկամուտ չի ձևավորվել, իսկ A, A+ խմբի տնտեսություններում 2021թ. 2020թ. նկատմամբ զուտ եկամուտը կրճատվել է շուրջ 5 տոկոսով: Նշվածով պայմանավորված՝ գյուղացիական տնտեսություններում ցորենի արտադրության կազմակերպման մոտիվացիան պակասել է, որի արդյունքում էլ տարեցտարի ցորենի ինքաբավության մակարդակը կրճատվել է:

Աղյուսակ 1

Աշնանացան ցորենի արտադրությամբ զբաղվող C, C+, B, A, A+ խմբերում գյուղացիական տնտեսությունների գործունեության տնտեսական մի քանի ցուցանիշներ (2020-2022թթ.)[4]

---

[3] Ըստ ներկայացվող դասակարգման ՀՀ-ում ցորենի արտադրությամբ զբաղվող շուրջ 81 հազ. (ՀՀ 2014թ. Գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալների համաձայն) գյուղացիական տնտեսությունների 10.3%-ը ներառվել են C խմբում, 47,1%-ը՝ C+ խմբում, 33,2%-ը՝ B խմբում, 8.6%-ը՝ A խմբում և 0,8%-ը՝ A+ խմբում:

[4] Տվյալների հաշվարկման հիմք են ՀՀ ՎԿ հրապարակումները (Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2020թ., 2021թ., 2022թ. https://www.armstat.am/file/article/29_gt_2022.pdf, Պարենային ապահովություն և աղքատություն, 2020թ., 2021թ., 2022թ. https://www.armstat.am/am/?nid=82&id=2618)::

Հ/Հ	Ցուցանիշներ	Չափման միավոր	Պետական աջակցություն չստացած գ/տ			Պետական աջակցություն ստացած գ/տ		
			2020թ.	2021թ.	2022թ.	2020թ.	2021թ.	2022թ.
C և C+ խմբեր								
1.	1 հա բերքատվությունը	գ	19,00	14,90	22,10	19,00	14,90	22,10
2.	1 կգ իրացման գինը	դրամ	130,00	150,00	176,00	130,00	150,0	176,00
3.	1 հա հաշվով ստացվող արտադրանքի ինքնարժեքը	հազ. դրամ	209,8	275,4	275,0	192,31	257,90	205,02
4.	Զուտ եկամուտը 1 հա հաշվով	հազ. դրամ	37,19	-51,90	113,94	54,69	-34,40	183,94
5.	Շահութաբերության մակարդակը	%	17.72	-	41,42	28.44	-	89,72
B խումբ								
6.	1 հա բերքատվությունը	գ	19,00	14,90	22,10	19,00	14,90	22,10
7.	1 կգ իրացման գինը	դրամ	130,00	150,00	176,00	130,00	150,0	176,00
8.	1 հա հաշվով ստացվող արտադրանքի ինքնարժեքը	հազ. դրամ	197,00	263,04	267,14	179,51	245,54	197,14
9.	Զուտ եկամուտը 1 հա հաշվով	հազ. դրամ	49,99	-39,54	121,82	67,49	-22,04	191,82
10.	Շահութաբերության մակարդակը	%	25.38	-	45,60	37.59	-	97,30
A և A+ խմբեր								
11.	1 հա բերքատվությունը	գ	42,4	37,8	41,9	42,4	37,8	41,9
12.	1 կգ իրացման գինը	դրամ	130,00	150,00	176,00	130,00	150,0	176,00
13.	1 հա հաշվով ստացվող արտադրանքի ինքնարժեքը	հազ. դրամ	250,28	278,46	643,59	232,79	260,96	523,59
14.	Զուտ եկամուտը 1 հա հաշվով	հազ. դրամ	300,91	288,54	93,84	318,41	306,04	213,84
15.	Շահութաբերության մակարդակը	%	120,23	103,62	14,58	136,78	117,27	40,84

ՀՀ կառավարությունը վերջին երկու տարիներին դադարել է հացահատիկի արտադրության խթանմանը միտված աջակցության ծրագրերը, որը կարող է առիթ հանդիսանալ ճյուղի նկատմամբ վերահսկողության, մոնիթորինգի, արդյունավետության գնահատման գործառույթների չիրականացնելու: Ինչը կբերի հացահատիկային տնտեսությունների էլ ավելի անկման, ցորենի ցանքատարածությունների կրճատման, արտադրության հախուռն կազմակերպման, իսկ հատիկի ցածր որակի պատճառով տեղական արտադրության ցորենի հիմնական մասի ապրանքայնության մակարդակի նվազման, ներմուծումների ավելացման, հետևապես պարենային անվտանգության ռիսկերի:

Հաշվի առնելով հացահատիկային տնտեսության կարևորությունը, պարենային անվտանգության ապահովումը, գյուղատնտեսությունում արտադրական ներուժի օգտագործման հնարավորությունները, գյուղացիական տնտեսությունների արժևորման անհրաժեշտությունը հնարավոր ենք համարում Հայաստանում ցորենի ինքնաբավության մակարդակը հասցնել 50-55 տոկոսի: Ուղեցույց ունենալով այս ցուցանիշները, ցորենի արտադրության կազմակերպման և արժեշղթայի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անցում է պետք կատարել քաղաքականության բազմաքայլության, ընդունելով ցորենի արտադրությունը զարգացման ոլորտային գերակայություն, արտադրության և ինքնաբավության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներն ունենան բացառապես համակարգային և հասցեական բնույթ: Այս տեսանկյունից օբյեկտիվ անհրաժեշտություն է ուշադրությունը բևեռել հետևյալ բաղադրիչների վրա.

1. Սերմնաբուծություն
2. Ագրոներդրանքների հասանելիություն և մատչելիություն
3. Հացահատիկային կուլտուրաների գնմամբ, պատվերների տրմամբ, վարկային, առևտրային և այլ բնույթի պայմանագրերի կնքմամբ զբաղվող կառույցի ձևավորում
4. Հողերի կոնսոլիդացիա
5. Ինովացիոն տեխնոլոգիաների ներդրում

6. Խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունների մատուցում
7. Մասնագիտական կադրերի վերապատրաստում

Ցորենի արժեշղթայում ներառված օղակները պետք է հանդիսանան շահառու և միաժամանակ զգան հացահատիկի արտադրության զարգացմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը, դերակատարությունը և իրենց բաժին պատասխանատվությունը:

Խաղողի արժեշղթայի ուսումնասիրության հիմնական նպատակը խաղողի արտադրությունից մինչև իրացում առկա օղակների վերլուծությունն է, տարբեր մակարդակներում խնդիրների վերհանումն ու տարբերակված քաղաքականության առաջադրումն է: Խաղողի արժեշղթայի հիմնական դերակատարներն են հումքի, ներդրանքների մատակարարները, խաղող արտադրող տնտեսությունները (բնակչության տնտեսություններ և առևտրային կազմակերպություններ), մեծածախ գնորդները, վերամշակող ընկերությունները, արտահանող ընկերությունները, ՀՀ-ում մանրածախ, մեծածախ վաճառքի կետերը, հյուրանոցները, ռեստորանները, սննդի կետերը, արտաքին շուկաները, վաճառքի օնլայն հարթակները (https://winesofarmenia.store/ գինու մասնագիտացված հարթակը եվրոպական գնորդների համար և https://buyarmenian.com/ հարթակը՝ ամերիկյան գնորդների համար), վերջնական սպառողները:

Պաշտոնական վիճակագրական տվյալներով՝ Հայաստանում խաղողի արտադրության 87%-ը իրականացվում է Արարատի (44%) և Արմավիրի (43%) մարզերում: Վայոց ձորում, որտեղ ներկայումս առկա է խաղողագինեգործության նպատակով հողատարածքի գնման ամենաբարձր պահանջարկը, իրականացվում է երկրի խաղողի արտադրության ընդամենը 3%-ը: Հանրապետության կտրվածքով խաղողի այգիների ընդհանուր տարածքի 89 %-ը այգետարածքներում մշակվող խաղողի այգիներն են, իսկ 11 %-ը՝ տնամերձ հողերում մշակվողները, ընդ որում այգետարածքներում մշակվող խաղողի շուրջ 80 %-ը տեխնիկական սորտի են, իսկ տնամերձ հողերում մշակվող խաղողի 58 %-ը սեղանի սորտեր են: Հայաստանում խաղողագործությամբ զբաղվում են ավելի քան 66,5 հազար տնտեսություններ՝ կենտրոնացած 5 մարզերում: Դեռևս 2000թ. սկզբից խաղողի վերամշակման ձեռնարկությունների մոտ նկատվում է սեփական այգիների հիմնման / ձեռքբերման միտում (աղյուսակ 2):

Խաղողի այգիների միջին չափը մեկ տնտեսության հաշվով կազմում է ընդամենը 0,23 հա: Թիրախային մարզերում մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին ընկնող խաղողի այգիները նույնպես բավականին փոքր են: Նման մակերեսով այգու մշակության եկամտաբերությունը կամ խիստ ցածր է, կամ բացակայում է: Մշակվող այգիների տարածքի չափը ուղղակի ազդեցություն ունի արտադրանքի ինքնարժեքի, առաջադեմ ինտենսիվ տեխնոլոգիաների (օրինակ՝ ոռոգման արդիական, կարկտապաշտպան համակարգերի) կիրառության, տնտեսության ինտենսիվացման մակարդակի վրա: Ըստ էության, որքան մեծ է մշակվող մակերեսը, այնքան ցածր է ինքնարժեքը: Ընդհանրապես խաղողի այգու հիմնման և մշակության ծախսերը կարող են էականորեն տարբերվել՝ պայմանավորված այգու չափերով, մշակվող սորտերով, ինտենսիվացման մակարդակով (մեքենասարքավորումներ, ավանդական կամ ժամանակակից ագրոնոմիական տեխնոլոգիաներ) և այլ գործոններով:

Աղյուսակ 2

Այգետարածքներում և տնամերձ հողերում խաղողի այգիների մշակությամբ զբաղվող տնտեսություններ[5]

Տարածք	Խաղողի այգիների մշակությամբ զբաղվող տնտեսություններ	Որից՝	
		Այգետարածքներում	Տնամերձ հողերում
Հայաստան, այդ թվում՝	**66 591**	**26 927**	**46 321**

[5] Կրինա Տուրտոյ, Հրանտ Դավթյան «Բազմամյա տնկարկները ՀՀ-ում», 2019թ., էջ 298

ք. Երևան	2 285	71	2 215
Արագածոտն	4 164	2 977	1 716
Արարատ	21 588	8 441	14 627
Արմավիր	19 461	5 781	15 793
Գեղարքունիք	11	6	6
Լոռի	583	209	431
Կոտայք	2 207	765	1 489
Շիրակ	26	0	26
Սյունիք	1 181	282	956
Վայոց ձոր	4 444	1 954	3 153
Տավուշ	10 641	6 441	5 728

Հանրապետությունում խաղողի (հատկապես տեխնիկական սորտերի) ինքնարժեքի հիմնավորված (ըստ տեխնոլոգիական քարտերի) և շահագրգիռ բոլոր կողմերի համար ընդունելի հաշվարկ կատարված չէ: Մինչև 2020թ. ինքնարժեքի հաշվարկված մեծությունը տատանվել է 80-100 դրամ/կգ սահմաններում՝ կախված ապրանքների և ծառայությունների գներից, բերքատվության ցուցանիշից, իսկ 2020թ. ի վեր ծախսերն աճել են՝ բարձր գնաճով պայմանավորված: Ներդրանքների գների զգալի աճ է արձանագրվել նաև 2022-2023թթ.՝ հատկապես պարարտանյութերի, մարդկային ուժի օգտագործման և դիզելային վառելիքի ծախսերի մասով: Խաղողագործների գնահատմամբ 1 կգ խաղողի արտադրության ինքնարժեքը 2023թ. կտատանվի 111-140 դրամ/կգ սահմաններում: Հետևաբար միջին իրացման ցանկալի գինը (+15%) պետք է կազմի շուրջ 127-133 դրամի շրջանակում: Վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալների համաձայն 2023 թվականի 1-ին եռամսյակին խաղողի իրացման միջին գինը կազմել է 257 դրամ (նախորդ տարվա բերք), իսկ վերամշակող ընկերությունների կողմից գնման նվազագույն գին է սահմանվել 110 դրամը: Հանրապետությունում արտադրված խաղողի շուրջ 80%-ը գնվում է վերամշակող ընկերությունների կողմից (շուրջ 10 ընկերություններ): Մեր գնահատմամբ, ընթացիկ տարում խաղող վերամշակող ընկերությունների կողմից առաջարկվող գնման գների պայմաններում՝ տնտեսավարողների գերակշիռ մասը շահույթ չեն ստանա:

Արժեշղթայի 1-ին մակարդակում (խաղողի արտադրություն) խնդիրները կապված են հիմնականում ինտենսիվացման ցածր մակարդակի, մշակության ավանդական մոտեցումների, հիմնական և շրջանառու միջոցների ցածր որակի ու բարձր գների, ոռոգման հիմնախնդիրների, հետբերքահավաքային կորուստների, իրացման ցածր գների և այլնի հետ: Մեր կողմից իրականացված հարցմանը (Գյուղատնտեսական արտադրանքի իրացման արժեշղթայում առկա խնդիրները բացահայտելու նպատակով ՀՀ Արարատի, Արմավիր և Տավուշի մարզերի 105 տնտեսավարողների՝ 38-ը Արմավիրի մարզից, 39-ը Արարատի մարզից և 28-ը Տավուշի մարզից, շրջանում նախապես կազմված հարցաթերթիկների հիման վրա իրականացվել է հարցում՝ հարցաթերթիկների լրացման ու հեռախոսային հարցման ձևով) մասնակից այն տնտեսավարողները, որոնք զբաղված են խաղողի արտադրությամբ, որպես իրացման հիմնական խնդիրներ առանձնացրել էին վաճառքի ցածր գները, արտադրանքի մրցունակությունը, ֆինանսական դժվարությունները, Լարսի անցակետի հետ կապված խնդիրները և այլն:

Մեր գնահատմամբ արժեշղթայի 1-ին մակարդակում խնդիրների հիմքում նաև տնտեսությունների փոքր չափերն են, որոնց պայմաններում առկա են դժվարություններ խաղողի մշակությունը կազմակերպել ինտենսիվ եղանակով: Արդյունքում՝ միավորի ինքնարժեքը բարձր է, որն էլ ազդում է խաղողի իրացման գնի ձևավորման վրա: Սակայն, այս դեպքում էլ շահեկան դիրքերում չէ խաղող արտադրող տնտեսությունը, քանի որ գյուղացիական տնտեսությունների կողմից խաղողի իրացման միջին գները վերջին 5 տարիների ընթացքում տատանվում են 145-185 դրամի սահմաններում, իսկ մանրածախ գները՝ 680-789 դրամի սահմաններում՝ շուրջ 4,3-4,7 անգամ ավելի թանկ:

Խաղողի արժեշղթայի ուսումնասիրությունները վկայում են առաջնային արտադրական միավորումների արդյունավետ աշխատանքի ապահովման գործում շղթայի վրա հատկապես 2-րդ մակարդակի՝ վերամշակող ձեռնարկությունների դերակատարությունը, որը շարունակում է կրել միակողմանի բնույթ՝ գործընկերայինի փոխարեն: Խաղողի արտադրությունը որպես հումք պետք է ունենա որակական համապատասխանություն, որում որոշիչ է պետության միջամտությունը՝ համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորման և կանոնակարգերի մշակման առումով:

Հանրապետությունում խաղողի արտադրությամբ զբաղվող տնտեսությունների շուրջ 70%-ն ունեն մինչև 0.1 հա տարածքով այգիներ, ուստի ագրարային քաղաքականությունը պետք է ուղղված լինի տնտեսությունների խոշորացմանը, ինտենսիվացմանը, կոոպերացմանը և խաղողի ինքնարժեքի նվազեցմանն ուղղված միջոցառումներին: Առաջնային մակարդակում առաջարկվող քաղաքականությունը ըստ մեզ պետք է լինի համալիր և ծրագրային բնույթի՝ երկարաժամկետ և տարեկան կտրվածքով, մասնավորապես աջակցման և սուբսիդավորման հասցեական, ուղղակի և անուղղակի ձևերի կիրառմամբ: Առաջիկայում հանրապետությունում ներդնել տնտեսությունների գրանցման ռեեստր և պետական աջակցությունից օգտվելու հնարավորություն ընձեռել հատկապես ռեեստրում գրանցված տնտեսություններին: Աջակցությունը կարելի է կապել նաև ստացվող վնասի և շահույթի հետ, ինչպես արվում է օրինակ Ճապոնիայում (շահույթից կախված ֆերմերները տարբերակված աջակցություն են ստանում, ինչպես նշվեց՝ արդյունավետ աշխատող տնտեսությանը տրամադրվում է արտոնյալ աջակցություն: Տարբերակված աջակցության միջոցով Ճապոնիայում խթանվում է գյուղատնտեսության ճյուղում իրավաբանական անձանց թվի ավելացմանը, քանի որ ֆիզիկական անձ ֆերմերները մրցակցության դաշտում ունենում են զարգացման սահմանափակվածություն և արդյունքում՝ գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման ծավալները նվազում են): Աջակցության կառուցակարգերի կիրառումը միտված պետք է լինի խաղողի մշակության տարածքների ընդլայնմանը, արտադրության ծավալների ավելացմանը, մշակության ինովացիոն տեխնոլոգիաների ներդրմանը և վերջապես՝ ինքնարժեքի նվազեցմանն ու շահույթի ավելացմանը:

Հանրապետության **պտղաբուծական** հիմնական շրջանները տեղաբաշխված են Արարատյան դաշտավայրի և նրա մերձակա շրջաններում. և՛ տարածքով, և՛ համախառն բերքի ծավալներով առաջատար դիրքերում են Արմավիրի, Արարատի և Արագածոտնի մարզերը: Պտղաբուծության ճյուղի զարգացման տեսանկյունից առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել նաև Սյունիքի և Տավուշի մարզերին, որտեղ հիմնականում արտադրվում են հանրապետության մերձարևադարձային պտուղների գրեթե ամբողջ ծավալները:

Հանրապետությունում պտղատու այգիների տարածքների հաշվով առկա է կայունության կամ աճի միտում՝ 2022 թվականին 2020 թվականի նկատմամբ աճը կազմել է շուրջ 3,1 %: Պտղի արտադրության ծավալները նույնպես աճել են՝ 2020 թվականի նկատմամբ շուրջ 27%-ով: Պտղատու այգիների տարածքների 57-58%-ը կազմում են կորիզավորները: Համեմատաբար բարձր է նաև կորիզավորների միջին բերքատվությունը (71-97g/հա), որի արդյունքում էլ հանրապետությունում արտադրվող ընդամենը պտղի 56-65%-ը կազմում են կորիզավորները: Պտղատեսակներից արտադրության ծավալներով առաջնային դիրքերում են ծիրանը, խնձորը, դեղձը և սալորը:

Հանրապետությունում պտղատու այգիների տարածքներ ունեն շուրջ 185 հազար տնտեսություն, որոնցից ընդամենը 18%-ն է այգետարածքներում: Սակայն սուբյեկտների թիվը հնարավորություն չի տալիս իրավիճակի մասին ամբողջական պատկերացում ստանալ, քանի որ շատ կարևոր են մշակվող այգիների չափերը (աղյուսակներ 3): Հանրապետությունում գերակշռում են մինչև 0,1 հա տարածքով այգիները՝ պտղատու այգի ունեցող տնտեսությունների 78.0 %-ը, իսկ 1 հա և ավելի պտղատու այգիներ ունեն տնտեսությունների ընդամենը 2 %-ը՝ 3726 տնտեսություն:

Աղյուսակ 3

Այգետարածքներում և տնամերձ հողերում պտղատու այգիներ ունեցող տնտեսություններ[6]

Տարածք	Պտղատու այգիներ ունեցող տնտեսություններ	Որից՝	
		Այգետարածքներում	Տնամերձ հողերում
Հայաստան, այդ թվում՝	**185 054**	**33 169**	**172 669**
ք. Երևան	4 877	176	4 713
Արագածոտն	18 850	4 752	17 530
Արարատ	22 961	9 756	18 988
Արմավիր	15 349	5 459	12 590
Գեղարքունիք	20 606	19	20 591
Լոռի	20 011	716	19 807
Կոտայք	29 215	4 778	27 882
Շիրակ	11 005	29	10 993
Սյունիք	13 070	3 627	11 524
Վայոց ձոր	8 181	2 512	7 774
Տավուշ	20 930	1 345	20 277

Արտադրության փուլում հանդիպող հիմնական խոչընդոտներից կարող ենք առանձնացնել տնկիների ցածր որակը, ոռոգման ջրի հասանելիությունը, բնակլիմայական ռիսկերը, մեքենայացման ցածր մակարդակը, հիվանդություններն ու վնասատուները, աշխատուժի պակասը, գիտելիքների ցածր մակարդակը, հետբերքահավաքային կորուստները և այլն:

Հանրապետությունում 2022 թվականին արտադրված պտղի և հատապտղի 64,5 %-ը վաճառվել է, 22,2 %-ը օգտագործվել տնտեսություններում, որից 45,5 %-ը վերամշակվել է: Ամենաբարձր վաճառքի ծավալներ ունեն Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Տավուշի, Վայոց ձորի մարզերում, իսկ տնտեսություններում օգտագործման ծավալներով առաջատար դիրքերում են Սյունիքի, Լոռու և Շիրակի մարզերի տնտեսությունները[7]: Արմավիրի, Արարատի և Արագածոտնի մարզերում տնտեսավարողների համար մրգերի արտադրությունը գործունեության հիմնական ուղղությունն է, նրանք դա դիտում են որպես իրենց մասնավոր բիզնեսը, հետևաբար արտադրվող ապրանքներն էլ նախատեսված են գլխավորապես վաճառքի համար: Այլ կերպ ասած՝ որքան մեծ են տնտեսությունները (իրենց թողարկած արտադրանքով), այնքան բարձր է նրանց ապրանքայնության մակարդակը:

Պտղի վաճառքի հիմնական ուղիներն են արտահանումը, վաճառք վերամշակող ընկերություններին, միջնորդ-վերավաճառողներին, անմիջապես սպառողներին: Սովորաբար բարձր որակի բերքը գնվում է արտահանողների կողմից, բարձր և միջին որակը իրացվում է ներքին շուկայում, իսկ համեմատաբար ցածրորակ մրգերը գնվում են վերամշակողների կողմից: Արտահանման համար ոչ պիտանի սորտերի գնորդներն էլ չորացրած մթերք արտադրողներն են:

Մեր կողմից իրականացված հարցմանը մասնակից այն տնտեսավարողները, որոնք զբաղված են պտղի արտադրությամբ, որպես իրացման հիմնական ուղիներ առանձնացրել են մանրածախ շուկաները, տեղում վաճառքը, միջնորդներին, որոնք արտահանում են և վերամշակողներին: Հարցմանը մասնակից տնտեսավարողների շուրջ 80%-ը միրգն իրացնում էր անմիջապես և միայն 20 %-ը՝ պահպանելուց հետո: Որպես իրացման խնդիրներ առանձնացրել էին վաճառքի ցածր գները, վերամշակող ընկերությունների կողմից առաջարկվող գնման ցածր գները, մանրածախ շուկաներում գնորդ գտնելու դժվարությունները, իսկ որպես արտահանման խոչընդոտ առանձնացրել են

[6] Կրինա Տուրտոյ, Հրանտ Դավթյան «Բազմամյա տնկարկները ՀՀ-ում», 2019թ., էջ 29

[7] Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2022 թվականին

արտադրանքի մրցունակությունը, արտադրության փոքր ծավալները, ֆինանսական դժվարությունները, Լարսի անցակետի հետ կապված խնդիրները և այլն:

Վաճառքի լավագույն տարբերակներից մեկն անձամբ շուկայում կամ խանութներում վաճառելն է: Սակայն ըստ տնտեսավարողների և փորձագետների գնահատումների, մասնավորներին (վերավաճառողներին) վաճառելու տարբերակը լուրջ առավելություններ ունի մյուս ուղղությունների նկատմամբ: Այն խնայում է տնտեսավարողների ժամանակը, որն ուղղվում է գյուղատնտեսական աշխատանքների կատարմանը, մասնավորները գնում են մրգերի մեծ ծավալներ կամ ամբողջ բերքը, առանձին դեպքում գնում են բերքը ծառի վրա (մասնավորն իր միջոցներով է կազմակերպում բերքահավաքը), որն ուղղակի «փրկություն» է աշխատուժի պակաս ունեցող տնտեսավարողների համար: Բացի այդ մասնավորները հիմնականում վճարում են անմիջապես տեղում, որը տնտեսավարողներին ազատում է ֆինանսական և ժամանակատար ոչ հաճելի հոգսերից:

Պտղի իրացման մյուս կարևոր ուղղությունը վաճառքն է վերամշակող ընկերություններին: Վերջին տարիներին վերամշակող ընկերությունները վերամշակված արտադրանքի ինքնարժեքի իջեցման նպատակով հիմնել են սեփական այգիներ: Չնայած դրան վերամշակող ընկերությունները շարունակում են իրենց ուրույն տեղն ունենալ պտղի արժեշղթայում և չի կարելի թերագնահատել նրանց դերակատարությունը: Վերջին 5 տարիների ընթացքում վերամշակող ընկերությունների կողմից գնվել է արտադրված պտղի 9-11%-ը:

Ապրանքների գնման գները կարգավորելու համար առաջարկում ենք ամեն տարի կազմվի մասնագիտական հանձնաժողով (կոոպերատիվի անդամ, վերամշակող ընկերությունների ներկայացուցիչներ, ոլորտի առաջատար մասնագետներ և այլն), որը կսահմանի պտղի գնման նվազագույն գին:

Պտղաբուծական տնտեսությունների զարգացմանը, տնտեսական արդյունավետության բարձրացմանը, առավել հեռանկարում՝ շրջանաձև տնտեսության զարգացմանը կարող է նպաստել նաև վերջիններիս (C, C+ խմբերում գտնվող գյուղացիական տնտեսություններ) կողմից արտադրվող և իրացվող նոր արտադրանքի արտադրության խրախուսումը, մասնավորապես՝ տարբեր պտղատեսակներից նոր արտադրանքի արտադրության համար մատչելի ֆինանսական միջոցների հասանելիության ապահովում, աջակցություն նոր արտադրանքի ներկայացմանը տեղական և արտաքին շուկաներում, արտաքին շուկաների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, սկզբնական փուլում լոգիստիկ ծախսերի մասնակի փոխհատուցում: Աջակցությունը կարելի է կապել նաև տնտեսությունների չափերի հետ, մասնավորապես իրականացնել այգեհիմնման ծախսերի մասնակի փոխհատուցում այն տնտեսավարողների համար, որոնք, ըստ դասակարգման կգտնվեն C և C+ խմբերում, ինչի արդյունքում այգի և այգեհիմնման նպատակով կմիավորեն գերփոքր և փոքր տնտեսությունները, կներդնեն առավել արդիական տեխնոլոգիաներ (կարկտապաշտպան, ոռոգման արդիական համակարգեր, ջրավազան և այն): Պետական աջակցության նման մոտեցումը կարող է նպաստել տնտեսությունների խոշորացմանը (C, C+ -ից անցում B, A, A+ խմբեր), արտադրվող պտղի ծավալների ավելացմանը, տնտեսությունների գործունեության տնտեսական արդյունավետության բարձրացմանը, միաժամանակ գյուղատնտեսական նշանակության հողերի մասնատվածության մակարդակի նվազեցմանը:[8]

Հայաստանի Հանրապետությունում հատկապես **կաթի և կաթնամթերքի** կայուն արժեշղթայով և ներառնված սուբյեկտների փոխլրացնող գործելակերպով է պայմանավորված պարենային և տնտեսական անվտանգությունը: Կաթի ինքնաբավարության մակարդակը բարձր է (83,4%), սակայն վերջին տարիներին գյուղացիական տնտեսություններում կրճատվել է թե անասնագլխաքանակը և թե արտադրության ծավալները:

[8] Ըստ մշակված դասակարգման C, C+ խմբերի տնտեսությունները ունեն մինչև 0.99 հա բազմամյա տնկարկներ, B խմբինը՝ 1-1.99 հա, A խմբինը՝ 2-2.99 հա, իսկ A+ խմբինը՝ 3 հա-ից ավել:

ՀՀ-ում կաթի արժեշղթայի հիմնական դերակատարներն են՝ արտադրության միջոցների մատակարարները, կաթի արտադրությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունները (C, C+, B, A, A+ խմբերում գործունեություն ծավալող), առևտրային կազմակերպությունները, վերամշակող ընկերությունները, հավաքման կետերը (միջնորդներ), ներմուծմամբ և արտահամամբ զբաղվող սուբյեկտները, վաճառողներն ու սպառողները:

Կաթի արժեշղթայի առաջին օղակի հիմնական սուբյեկտները հանդիսանում են գյուղացիական տնտեսությունները (արտադրում են կաթի տեղական արտադրության 98,8%-ը[9]): Համաձայն 2014թ. տվյալների ՀՀ-ում ԽԵԿ ունեցող գյուղացիական տնտեսությունների թիվը կազմել է 110,9 հազար, որից կովեր՝ 103.8 հազ. տնտեսություններ (կաթնային հոտ՝ 100.8 հազ. տնտեսություն):[10]

Կաթի արտադրության ուսումնասիրությունը հնարավորություն է տվել վերլուծել և հաշվարկել արտադրանքի ինքնարժեքը, շահույթը և շահութաբերության մակարդակը:

Կաթի արտադրության կարևոր գործոն է հանդիսանում կերերի օգտագործումը՝ կազմելով արտադրական ինքնարժեքի 70-77 տոկոսը: Կաթի արտադրությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունները, որոնք դասակարգված են C, C+ խմբերում, հիմնականում օգտագործում են կոպիտ և հյութալի կեր, իսկ B խմբի տնտեսություններն օգտագործում են նաև խտացված կերեր: Նման տնտեսություններում գործընթացը կազմակերպվում է էքստենսիվ եղանակով: A և A+ խմբերում դասակարգված տնտեսություններում գործընթացի կազմակեպումն ինտեսիվ է, այսինքն՝ կիթը, գոմաղբի հեռացումը, կերակրումը, ջրամատակարարումն իրականացվում է ավտոմատացված եղանակով:[11]

Կաթի արտադրությամբ զբաղվող C և C+ խմբերում գտնվող գյուղացիական տնտեսությունների 1 գլխի հաշվով զուտ եկամուտը 2022թ. 2020թ. նկատմամբ ավելացել է 51.7, B խմբի գյուղացիական տնտեսություններում՝ 70.3, իսկ A և A+ խմբերի գյուղացիական տնտեսություններում՝ 66.9%-ով (աղյուսակ 4):

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել կաթի արտադրությամբ զբաղվող C և C+ խմբերում գտնվող տնտեսությունների շահութաբերության ցածր մակարդակը պայմանավորված է ըստ պահանջի կերատեսակների չօգտագործմամբ և վերամշակող կազմակերպությունների կողմից առաջարկվող կաթի գներով: Մասնավորապես՝ ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալների կաթնային հոտ ունեցող տնտեսությունները կազմել են 100.8 հազ., ըստ ներկայացված դասակարգման C-ում 68.5 հազ. (67,8%), C+-ում՝ 18.9 հազ. (18,7%), B-ում՝ 9.3 հազ. (9,2%), A-ում՝ 3.9 հազ. (3,9%), A+-ում՝ 155 տնտեսություն (0,4%): Հանրապետությունում չկան գյուղացիական տնտեսությունների շահերը ներկայացնող կառույցներ կամ միություններ, որոնք կարող են բանակցություններ վարել վերամշակող կազմակերպությունների հետ գնի ձևավորման շուրջ: Կարճ պահպանման ժամկետի պատճառով տնտեսությունները ստիպված են լինում կաթը վաճառել վերամշակողների կողմից առաջարկվող գներով: Նման դեպքում այդ կազմակերպություններն ունենում են առավելություններ և հանդես են գալիս որպես գին թելադրողներ և ունենում են մրցակցային առավելություններ: Նշվածով պայմանավորված՝ տնտեսությունների հիմնական մասն արտադրված կաթի մի մասն օգտագործում է սեփական կարիքների համար, իսկ մնացածը՝ ոչ արտադրական՝ տնայնագործական եղանակով՝ արտադրելով փոքր ծավալների պանիր, մածուն, թարմ կաթի հետ իրացնում շուկայում:

Աղյուսակ 4.

---

[9] ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2023, Երևան 2023, https://armstat.am/file/doc/99541108.pdf

[10] ՀՀ 2014թ. Գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալներ

[11] Նշված տնտեսություններն ունենան նաև ջրախմոց (անհատական կամ խմբային տաքացվող), քամիար, լուսավորության լամպեր, կովերի հանգստի տեղերում նախատեսված ռեզինե մատրասներ, արևային ջրատաքացուցիչ կթի հարթակի համար, պաղեցման տարողություն և այլն:

Կաթի արտադրությամբ զբաղվող C, C+, B, A, A+ խմբերի գյուղացիական տնտեսությունների գործունեության տնտեսական մի քանի ցուցանիշներ (2020-2022թթ.)[12]

Հ/Հ	Ցուցանիշներ	Չափման միավոր	2020թ.	2021թ.	2022թ.
	C և C+ խմբեր				
1.	Միջին կաթնատվությունը	կգ	1800	1850	1900
2.	1 կգ իրացման գինը	դրամ	148,00	155,00	196,00
3.	Արտադրանքի ինքնարժեքը 1 գլխի հաշվով	հազ. դրամ	212.0	240.2	289.9
4.	Զուտ եկամուտը 1 գլխի հաշվով	հազ. դրամ	54.4	46.6	82.5
5.	Շահութաբերության մակարդակը	%	25,64	19,39	28,47
	B խումբ				
6.	Միջին կաթնատվությունը	կգ	2398	2435	2467
7.	1 կգ իրացման գինը	դրամ	148	155	196
8.	Արտադրանքի ինքնարժեքը 1 գլխի հաշվով	հազ. դրամ	250.2	283.9	305.2
9.	Զուտ եկամուտը 1 գլխի հաշվով	հազ. դրամ	104.7	93.5	178.3
10.	Շահութաբերության մակարդակը	%	41,86	32,91	58,41
	A և A+ խմբեր				
11.	Միջին կաթնատվությունը	կգ	3500	3537	3570
12.	1 կգ իրացման գինը	դրամ	148	155	196
13.	Արտադրանքի ինքնարժեքը 1 գլխի հաշվով	հազ. դրամ	351.9	374.9	422.4
14.	Զուտ եկամուտը 1 գլխի հաշվով	հազ. դրամ	166.1	176.3	277.3
15.	Շահութաբերության մակարդակը	%	47.2	47,39	65,64

ՀՀ կաթի արժեշղթայում գյուղացիական տնտեսությունների արտադրանքի գների կարգավորման, արտադրատնտեսական ցուցանիշների բարելավման, կաթի ձեռք բերման և բազիսային գների սահմանման, մթերման քանակների և գնագոյացման կառուցակարգերի հստակեցման նպատակով անհրաժեշտ է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն առընթեր ձևավորել որոշակի լիազորություններով օժտված մշտական հանձնաժողով, որի անդամներ կարող են լինել կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները (մասնակիցների 20%), գյուղացիական տնտեսությունները (մասնակիցների 40%՝ բոլոր գյուղական համայնքներից ընդգրկված), և վերամշակող կազմակերպությունները (մասնակիցների 40%): Մշտական հանձնաժողովը կարող է իրականացնել հետևյալ գործառույթները.

1. շուկայի ուսումնասիրություն և վերահսկողություն՝ հանձնաժողովը յուրաքանչյուր տարվա հունվար ամսից կիրականացնի կաթի շուկայի ուսումնասիրություններ, որը հնարավորություն կտա տեղեկանալու շուկայական իրավիճակի, գների, արտադրության և ներմուծման ծավալների, «գյուղացիական տնտեսություն-վերամշակող կազմակերպություն» կնքված պայմանագրերի վերաբերյալ: Տարվա ընթացքում պարբերաբար կիրականացնի պայմանագրերի կատարման վերահսկողություն:
2. տեղեկատվության ապահովում՝ հանձնաժողովում ընդգրկված անդամները պարբերաբար ՀՀ բոլոր համայնքներում կիրականացնեն տեղեկատվական հանդիպումներ, որի ժամանակ կտրվեն շուկայի ուսումնասիրության արդյունքներն ու կաթի քվոտայի առկայության մասին տեղեկատվություն:
3. մթերման գների կարգավորում՝ արտադրության ինքնարժեքի և կաթի շուկայական գների համեմատությամբ կսահմանվի կաթի նպատակային գին, որը գյուղացիական տնտե-

[12] Պարենային ապահովություն և աղքատություն, 2023 հունվար-սեպտեմբեր,ՀՀԱՎԿ, Երևան 2023, https://www.armstat.am/file/article/f_sec_3_2023_2.pdf

սություններին կապահովի ինքնաֆինանսավորման և գործունեության ընդլայնման հնարավորություններով: Տարվա ընթացքում գյուղացիական տնտեսություններն ազատ են իրենց արտադրանքի տնօրինման հարցում և այն կարող են վաճառել շուկայական գներով, որոնք հնարավոր է լինեն երաշխավորված գնից բարձր, ցածր կամ հավասար: Իրացման գինը նպատակային գնից ցածր լինելու դեպքում գյուղացիական տնտեսությունը կստանա փոխհատուցում (ելնելով գների տարբերությունից) յուրաքանչյուր տարի պետական բյուջեից հանձնաժողովին հատկացված ֆինանսական միջոցների չափով: Վերամշակող ընկերությունների կաթի գնման դեպքում, եթե նպատակային գինն ավելի ցածր լինի, քան իրացմանը, ապա վերամշակողը տարբերության չափը կփոխանցի հանձնաժողովի բյուջե:

4. քվոտաների սահմանում՝ հանձնաժողովը յուրաքանչյուր տարվա հունվար ամսին կներկայացնի կաթի երաշխավորված իրացման քվոտաներ, որոնք կտրվեն գյուղացիական տնտեսություններին համապատասխան դիմում ներկայացնելուց հետո: Քվոտայում նշված ծավալի կաթը կիրացվի վերամշակող ընկերություններում: Նշված ծավալով կաթի մատակարարում չիրականացնելու դեպքում կվճարի տույժեր: Գյուղացիական տնտեսությունը հնարավորություն կունենա տարվա ընթացում քվոտայում նշված ծավալի կաթի չապահովման դեպքում, պատճառը ներկայացնելուց հետո, այն հետ վերադարձնել հանձնաժողովին:

5. պայմանագրերի կնքում՝ ձեռք բերված քվոտաների համաձայն եռակողմ պայմանագրերի կնքում՝ գյուղացիական տնտեսություն-հանձնաժողով-վերամշակող կազմակերպություն, որտեղ հանձնաժողովը հանդես կգա որպես երաշխավոր:

Գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների առջև ծառացած խնդիրների իրատեսական լուծումները հատկապես կնպաստեն գյուղացիական տնտեսությունների նորովի կայացմանը, բիզնես սկզբունքների կիրառմամբ ագրոբիզնեսի համակարգում նրանց տեղի և դերի ամրապնդմանը, գյուղատնտեսության զարգացման տարաբնույթ ծրագրերում մասնակցության երաշխավորմանը, դասակարգման քանակական և որակական չափորոշիչների ամրագրմանը, կրթական, խորհրդատվական, տեղեկատվական, բիզնես հմտությունների ձեռքբերմանը, պարենային արժեշղթաներում իրավունքների պաշտպանությանը, իրավական հարցերի իմացությանը, գյուղացիական տնտեսություններում հաշվառումների, գրանցումների վարմանը, վարկերից օգտվելուն և այլն:

Ընթացիկ տարում հրապարակված և հրապարակման ներկայացված 5 գիտական հոդվածներում, 1 մեթոդական ցուցումներում առաջադրվել են եզրականգումներ ու առաջարկություններ առավել արդյունավետ դարձնելու մշակվելիք և իրականացվելիք ՀՀ ագրարային քաղաքականությունը:

Ուսումնասիրության արդյունքները համապարփակ տեղեկատվություն են ապահովում գյուղատնտեսությունում արտադրական հիմնական սուբյեկտ հանդիսացող գյուղացիական տնտեսությունների արտադրատնտեսական գործունեության, ծառացած խնդիրների և լուծման ուղիների վերաբերյալ: Այն կարող է նպաստել միջազգային ոլորտային համագործակցության զարգացմանը, պարենային ապահովման մակարդակի բարձրացմանը: